

# ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2019

## ՖԻԶԻԿԱ

### ԹԵՍ 8

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագլության համար: **Թեստ-գրքույկը չի սուսանվում: Սուսանվում է միայն պատասխանների ճևաքուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճևաքուղը: Պատասխանների ճևաքուղի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1


**Ո՞րն պնդումն է սխալ:**

- 1) ճանապարհը վեկտորական մեծություն է:
- 2) ճանապարհի միավորը ՄՀ-ում 1 մ-ն է:
- 3) Մարմնի անցած ճանապարհը ժամանակի ընթացքում չի նկազում:
- 4) Որևէ ժամանակամիջոցում մարմնի անցած ճանապարհ կոչվում է այդ ժամանակամիջոցում հետագծի երկայնքով մարմնի անցած հեռավորությունը:

2

Նկարում պատկերված է հաշվարկման իներցիալ համակարգում ուղղագիծ շարժվող դահուկորդի արագության մոդուլի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ժամանակի ո՞ր միջակայքում է նրա վրա ազդող ուժերի համազորի պրոյեկցիան շարժման ուղղության վրա փոքր գրոյից:

- 1) Սիայն 3 - 4 վ միջակայքում:
- 2) Սիայն 4 - 6 վ միջակայքում:
- 3) Շարժման ամբողջ ընթացքում:
- 4) Սիայն 0 - 3 վ միջակայքում:



3

Մարմնի արագության պրոյեկցիան ներկայացված է  $v_x = 2 + t$  հավասարմանք, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Ի՞նչ բանաձևով է որոշվում տեղափոխության պրոյեկցիան այդ շարժման դեպքում:

- 1)  $S_x = 2 + \frac{t^2}{2}$ :
- 2)  $S_x = \frac{t^2}{2}$ :
- 3)  $S_x = 2t + \frac{t^2}{2}$ :
- 4)  $S_x = 2 + t^2$ :

4

**Նշված ո՞ր երկու մեծությունների ուղղություններն են միշտ համընկնում:**

- 1) Արագությունը և համազոր ուժը:
- 2) Արագացումը և համազոր ուժը:
- 3) Արագացումը և արագությունը:
- 4) Տեղափոխությունը և համազոր ուժը:

5

Ինչպե՞ս կփոխվի երկու նյութական կետերի գրավիտացիոն փոխազդեցության ուժը, եթե նրանց միջև հեռավորությունը և յուրաքանչյուրի զանգվածը մեծացնենք 2 անգամ:

- 1) Կմեծանա չորս անգամ:
- 2) Կվորքանա երկու անգամ:
- 3) Չի փոխվի:
- 4) Կմեծանա երկու անգամ:

6

Հնարավո՞ր է արդյոք, որ մարմինը կատարի պտտական շարժում, եթե նրա վրա ազդող ուժերի վեկտորական գումարը զրո է:

- 1) Այո, եթե այդ ուժերը կիրառված են տարբեր կետերում:
- 2) Կախված է մարմնի ձևից:
- 3) Ոչ մի դեպքում հնարավոր չէ:
- 4) Այո, եթե այդ ուժերը կիրառված են միևնույն կետում:

7

Ի՞նչ բնույթի են առաճգականության ուժերը:

- 1) Ելեկտրամագնիսական:
- 2) Միջուկային:
- 3) Կարող են լինել կամայական բնույթի:
- 4) Գրավիտացիոն:

8

Որքա՞ն է մարմնի կշիռն ազատ անկման ժամանակ:

- 1) Մեծ է ծանրության ուժից:
- 2) Հավասար է ծանրության ուժին:
- 3) Կարելի է հաշվել տիեզերական ձգողության ուժի բանաձևով:
- 4) Զրո է:

9


Ի՞նչ միավորով է չափվում ուժի մոմենտը միավորների ՄՀ-ում:

- 1) 1 Նմ:
- 2) 1 Նմ<sup>2</sup>:
- 3) 1 Ջ:
- 4) 1 Ն:

10

Նկարում պատկերված անկշիռ ձողի վրա ազդում են  $|\vec{F}_1| > |\vec{F}_2|$  երկու հակուղիված ուժեր: Նկարի հարթության ուղղահայց առանցքի նկատմամբ ո՞ր կետով անցնող առանցքի նկատմամբ ձողը կլինի հավասարակշռության վիճակում:

- 1) b կետ:
- 2) c կետ:
- 3) Ωչ մի կետ:
- 4) σ կետ:



11

Չարժվելով փակ հետազծով՝ մարմինը վերադառնում է իր սկզբնական դիրքին: Նրա վրա ազդող ո՞ր ուժերի կատարած աշխատանքը կլինի զրո:

- 1) Ծանրության և առաձգականության ուժերի:
- 2) Շիման և առաձգականության ուժերի:
- 3) Կամայական ուժի:
- 4) Ծանրության և շիման ուժերի:

12

Ի՞նչ մեծություններից է կախված մարմնի՝ Երկրի ձգողությամբ պայմանավորված պոտենցիալ էներգիան:

- 1) Միայն մարմնի արագությունից:
- 2) Միայն մարմնի և Երկրի զանգվածներից:
- 3) Մարմնի զանգվածից, ազատ անկման արագացումից և ընտրված զրոյական մակարդակից մարմնի ունեցած բարձրությունից:
- 4) Միայն մարմնի զանգվածից:

13


Մարմինը լողում է հեղուկի մակերևության: Ո՞րն է մարմնի վրա ազդող ծանրության և արքիմեդյան ուժերի մոդուլների ճիշտ հարաբերակցությունը:

- 1)  $|m\vec{g}| > |\vec{F}_{\text{Ա}|}:$
- 2)  $|m\vec{g}| < |\vec{F}_{\text{Ա}|}:$
- 3)  $|m\vec{g}| + |\vec{F}_{\text{Ա}|} = 0 :$
- 4)  $|m\vec{g}| = |\vec{F}_{\text{Ա}|} :$

14

Նկարում պատկերված է ջրի մակերևույթին առաջացած ներդաշնակ ալիքի կողապատկերը ժամանակի որոշակի պահին: Որքա՞ն են ալիքի  $\lambda$  երկարությունը և  $x_0$  լայնույթը:

- 1)  $\lambda = 2 \text{ մ}, x_0 = 0,5 \text{ մ}:$
- 2)  $\lambda = 1 \text{ մ}, x_0 = 5 \text{ մ}:$
- 3)  $\lambda = 0,5 \text{ մ}, x_0 = 2,5 \text{ մ}:$
- 4)  $\lambda = 5 \text{ մ}, x_0 = 1 \text{ մ}:$



15

Որտե՞ղ ավելի շատ մոլեկուլ կա՝ մեկ մոլ ջրածնո՞ւմ, թե՞ մեկ մոլ ջրում:

- 1) Մեկ մոլ ջրում:
- 2) Մոլեկուլների թվերը հավասար են:
- 3) Պատասխանը կախված է ջրի ազուգատային վիճակից:
- 4) Մեկ մոլ ջրածնում:

16

Ո՞ր հավասարումն է նկարագրում հաստատում զանգվածով իդեալական գազի իզոխոր պրոցես:

- 1)  $\frac{p}{V} = const:$
- 2)  $\frac{V}{T} = const:$
- 3)  $pV = const:$
- 4)  $\frac{p}{T} = const:$

17

Ինչպե՞ս կփոխվի հաստատում զանգվածով իդեալական գազի ներքին էներգիան, եթե նրա ծավալը մեծանա 2 անգամ, իսկ ճնշումը փոքրանա 2 անգամ:

- 1) Կփոքրանա 2 անգամ:
- 2) Կմեծանա 4 անգամ:
- 3) Կմնա նույնը:
- 4) Կմեծանա 2 անգամ:

18


Սիմյանց հետ շփման հետևանքով երկու մարմիններ էլեկտրականանում են: Համեմատեք այդ մարմինների լիցքերի մոդուլները, եթե մեկի ծավալը  $k$  անգամ մեծ է մյուսի ծավալից:

- 1) Մեծ ծավալով մարմնի լիցքը  $k$  անգամ մեծ է փոքր ծավալով մարմնի լիցքի մոդուլից:
- 2) Մեծ ծավալով մարմնի լիցքը  $k$  անգամ փոքր է փոքր ծավալով մարմնի լիցքի մոդուլից:
- 3) Հնարավոր չէ հարցին միանշանակ պատասխանել:
- 4) Երկուսի լիցքերի մոդուլները հավասար են:

19

Լիցքավորված մետաղե հոծ զնդի մակերևույթի A կետում էլեկտրաստատիկ դաշտի պոտենցիալը 100 Վ է: Որքա՞ն է պոտենցիալ զնդի O կենտրոնում:


- 1) 0:
- 2) Մեծ է 100 Վ-ից:
- 3) Փոքր է 100 Վ-ից:
- 4) 100 Վ:



20

Ո՞ր գրաֆիկն է ճիշտ արտահայտում հարք կոնդեսատորի էներգիայի կախվածությունը լիցքից, եթե կոնդեսատորի ունակությունը հաստատուն է:

- 1)  $p$ :
- 2)  $q$ :
- 3)  $\eta$ :
- 4)  $w$ :



21


Մետաղե հաղորդչի ծայրերին կիրառենք հաստատուն լարում և այն տաքացնենք: Տաքացմանը զուգընթաց ինչպես կփոխալի նրա միջոկ անցնող հոսանքի ուժը:

- 1) Կմվազի:
- 2) Չի փոխալի:
- 3) Բոլոր պատասխանները հնարավոր են:
- 4) Կաճի:

22

Նկարում պատկերված շղթայի ո՞ր դիմադրությունում է հոսանքի ուժն ամենամեծը:

- 1) 50 Ω դիմադրությունում:
- 2) 60 Ω դիմադրությունում:
- 3) Բոլոր դիմադրություններում հոսանքի ուժը նույն է:
- 4) 100 Ω դիմադրությունում:



23

Ո՞ր բանաձևով է արտահայտվում Զոոլ-Լենցի օրենքը:

- 1)  $Q = mc(t_2 - t_1)$ :
- 2)  $Q = \lambda m$ :
- 3)  $Q = rm$ :
- 4)  $Q = I^2 Rt$ :

24

Ե՞րբ է հաստատուն հոսանքի աղբյուր պարունակող փակ շղթայի արտաքին տեղամասում անջատված հզորությունն ընդունում իր առավելագույն արժեքը: Արտաքին տեղամասի դիմադրությունը  $R$  է, հոսանքի աղբյուրի ներքին դիմադրությունը՝  $r$ :

- 1)  $R = 2r$ :
- 2)  $R = r$ :
- 3)  $r \ll R$ :
- 4)  $r \leq R$ :

25

Ո՞ր լիցքակիրների ուղղորդված շարժմամբ է պայմանավորված էլեկտրական հոսանքը կիսահաղորդիչներում:

- 1) Դրական և բացասական իոնների:
- 2) Իոնների և էլեկտրոնների:
- 3) Միայն էլեկտրոնների:
- 4) Էլեկտրոնների և խոռոչների:

26

Ո՞ր մեծությունն են անվանում ֆարագեյի հաստատուն:

- 1) Էլեկտրոնի լիցքի և էլեկտրաքիմիական համարժեքի արտադրյալը:
- 2) Էլեկտրոնի լիցքի և Բոլցմանի հաստատունի արտադրյալը:
- 3) Քիմիական համարժեքի և Ավոգադրոյի հաստատունի արտադրյալը:
- 4) Էլեկտրոնի լիցքի և Ավոգադրոյի հաստատունի արտադրյալը:

27

Լիցքավորված մասնիկը  $\vec{E}$  լարվածությամբ էլեկտրական և  $\vec{B}$  ինդուկցիայով մագնիսական փոխուղղահայաց համասեռ դաշտերում ( $\vec{E} \perp \vec{B}$ ) շարժվում է հաստատուն  $v$  արագությամբ: Ծանրության ուժն անտեսել: Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1)  $\vec{E}$ -ի մոդուլը մեծ է  $\vec{B}$ -ի մոդուլից  $v$  անգամ:
- 2)  $\vec{E}$ -ի մոդուլը փոքր է  $\vec{B}$ -ի մոդուլից  $v$  անգամ:
- 3)  $\vec{E}$ -ի մոդուլը շատ փոքր է  $\vec{B}$ -ի մոդուլից:
- 4)  $\vec{E}$  և  $\vec{B}$  վեկտորների մոդուլները հավասար են:

28

Ինչպե՞ս կփոխվի մագնիսական հոսքը փակ կոնտուրով, եթե նրա մակերեսը մեծացնենք 2 անգամ, իսկ կոնտուրի մակերևույթի նորմալով ուղղված մագնիսական դաշտի ինդուկցիան մեծացնենք 2 անգամ:

- 1) Փոքրանա 2 անգամ:
- 2) Կմեծանա 4 անգամ:
- 3) Կփոքրացման 4 անգամ:
- 4) Կմեծանա 2 անգամ:

29

Տատանողական կոնտուրում ազատ էլեկտրամագնիսական տատանումների հաճախությունը  $\nu$  է, կոճի ինդուկտիվությունը՝  $L$ :  $\Omega^o$  բանաձևով կարելի է հաշվել կոնտուրի կոնդենսատորի էլեկտրառունակությունը:

- 1)  $C = \frac{1}{2\pi^2 \sqrt{Lv}}$ :
- 2)  $C = 4\pi^2 Lv^2$ :
- 3)  $C = 2\pi^2 \sqrt{Lv}$ :
- 4)  $C = \frac{1}{4\pi^2 Lv^2}$ :

30

Ի՞նչն է ստվերի առաջացման պատճառը:

- 1) Լույսի դիֆրակցիան մարմնից:
- 2) Լույսի ցրումը մարմնից:
- 3) Լույսի ուղղագիծ տարածումը:
- 4) Լույսի բեկումը միջավայրում:

31

Լույսի ճառագայթը վակուումից անցնում է ապակու մեջ: ճառագայթի անկման անկյունն  $\alpha$  է, իսկ բեկման անկյունը՝  $\beta$ : Որքա՞ն է լույսի արագությունն ապակու մեջ, եթե վակուումում այն  $c$  է:

- 1)  $\frac{c \cdot \sin \beta}{\sin \alpha}$ :
- 2)  $\frac{c \cdot \cos \alpha}{\cos \beta}$ :
- 3)  $\frac{c \cdot \cos \beta}{\cos \alpha}$ :
- 4)  $\frac{c \cdot \sin \alpha}{\sin \beta}$ :

32

Ինչպիսի՞ ուսպնյակներում հնարավոր է ստանալ առարկայի կեղծ պատկեր:

- 1) Հավաքող և ցրող:
- 2) Միայն ցրող:
- 3) Ոսպնյակով կեղծ պատկեր հնարավոր չէ ստանալ:
- 4) Միայն հավաքող:

33

Ո՞ր գույնի լույսի ճառագայթն է օդում ապակե հատվածակողմով անցնելիս բոլորից քիչ շեղվում:

- 1) Կապույտ:
- 2) Մանուշակագույն:
- 3) Կարմիր:
- 4) Կանաչ:

34

Ո՞ր երևույթն է կոչվում դիֆրակցիա:

- 1) Ալիքի՝ արգելքները շրջանցելու երևույթը:
- 2) Սպիտակ լույսի տարալուծումը տարրեր գույնի լույսերի:
- 3) Քարակ թաղանթների գունավորման երևույթը:
- 4) Երկու ալիքների վերադրման երևույթը:

35

Ի՞նչ արագությամբ պետք է շարժվի մարմինը, որպեսզի շարժման ուղղությամբ նրա չափերը փորձանան 2 անգամ:

- 1)  $\frac{\sqrt{2}}{2}c$ :
- 2)  $\frac{\sqrt{3}}{2}c$ :
- 3)  $c$ :
- 4)  $\frac{c}{2}$ :

36

Ֆուտոնի իմպուլսը  $p$  է: Որքա՞ն է նրա էներգիան:

- 1)  $E = \frac{p}{c}$ :
- 2)  $E = \frac{p}{c^2}$ :
- 3)  $E = pc^2$ :
- 4)  $E = pc$ :

37

Մեկուսացված էլեկտրաչեղոք ցինկե թիթեղը լուսավորում են անդրմանուշակագույն ճառագայթումով: Ի՞նչ նշանի լիցք է ձեռք բերում թիթեղը:

- 1) Բացասական:
- 2) Չի լիցքավորվում:
- 3) Կամայական նշանի լիցք:
- 4) Դրական:

38

Ասումը  $E_3$  էներգիական մակարդակից  $E_1$  մակարդակ անցնելիս ճառագայթում է  $\lambda_1$  ալիքի երկարությամբ ֆոտոն, իսկ  $E_2$ -ից  $E_1$  մակարդակ անցնելիս՝  $\lambda_2$  ալիքի երկարությամբ ֆոտոն: Ի՞նչ ալիքի երկարությամբ ֆոտոն կճառագայթի ասումը  $E_3$  մակարդակից  $E_2$  մակարդակ անցնելիս:

- 1)  $\lambda_1 - \lambda_2$ :
- 2)  $\frac{\lambda_1\lambda_2}{\lambda_2 - \lambda_1}$ :
- 3)  $\frac{\lambda_1\lambda_2}{\lambda_2 + \lambda_1}$ :
- 4)  $\lambda_1 + \lambda_2$ :

39

Պղնձի ատոմի միջուկը պարունակում է 29 պրոտոն և 35 նեյտրոն: Քանի՞ էլեկտրոն է պարունակում պղնձի  $Cu^{+2}$  իոնը:

- 1) 31:
- 2) 27:
- 3) 29:
- 4) 35:

40

Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Միջուկի կապի էներգիան այն էներգիան է, որը՝

- 1) անհրաժեշտ է միջուկը երկու կեսի տրոհելու համար:
- 2) անջատվում է երկու միջուկների սինթեզի ժամանակ:
- 3) անհրաժեշտ է միջուկն առանձին պրոտոնների և նեյտրոնների տրոհելու համար:
- 4) անջատվում է միջուկի տրոհման ժամանակ:

41

Հոծ մարմինը լողում է հեղուկում: Նրա ծավալը քանի<sup>o</sup> անգամ է մեծ հեղուկում ընկդմված մասի ծավալից, եթե մարմնի նյութի խտությունը  $200 \text{ կգ/մ}^3$  է, իսկ հեղուկինը՝  $1000 \text{ կգ/մ}^3$ :

42

4,5Վ ԷլՉՈՒ ունեցող հոսանքի աղբյուրին միացված  $7,5 \text{Օմ}$  ռիմաղբությամբ հաղորդչով անցնում է  $0,5 \text{ Ա}$  հոսանք: Որքա՞ն է հոսանքի ուժը հոսանքի աղբյուրի կարճ միացման ժամանակ:

43

Որքա՞ն է միջավայրի բեկման ցուցիչը, եթե  $5 \cdot 10^{14} \text{ Հg}$  հաճախությամբ լույսի ալիքի երկարությունն այնտեղ  $3 \cdot 10^{-7} \text{ մ}$  է: Վակուումում լույսի արագությունը՝  $3 \cdot 10^8 \text{մ/վ}$  է:

44

Տրված է մարմնի շարժման հավասարումը՝  $x = 16t - 2t^2$ , որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Որքա՞ն է մարմնի արագությունը շարժումից 4 վայրկյան անց:

(45-46) Շղթայի տեղամասը կազմված է 4 մ երկարությամբ և  $0,048 \text{ մմ}^2$  կտրվածքի մակերեսով պողպատե հաղորդալարից և նրան հաջորդաբար միացված 2 մ երկարությամբ,  $0,021 \text{ մմ}^2$  կտրվածքի մակերեսով նիկելինե հաղորդալարից: Պողպատի տեսակարար դիմադրությունը  $12 \cdot 10^{-8}$  Օմ·մ է, իսկ նիկելինինը՝  $42 \cdot 10^{-8}$  Օմ·մ:

45

Որքա՞ն է տեղամասի ընդհանուր դիմադրությունը:

46

Որքա՞ն լարում է անհրաժեշտ կիրառել տեղամասի ծայրերին՝  $0,6$  Ա հոսանք ստանալու համար:

(47-48) Լույսի կետային աղբյուրի խորությունը ջրում  $1,5 \text{ մ}$  է: Ջրի բեկման ցուցիչը  $1,25$ :

47

Որքա՞ն է ջուր-օդ սահմանի լրիվ անդրադարձման սահմանային անկյան սինուսը:  
Պատասխանը բազմապատկեր 10-ով:

48

Որքա՞ն է ջրի մակերևույթին այն շրջանի շառավիղը, որի սահմաններում հնարավոր  
է ճառագայթների դուրս գալը դեպի օդ:

(49-50) Լույսի ամենափոքր հաճախությունը, որի դեպքում մետաղից էլեկտրոն է պոկվում,  
 $5 \cdot 10^{14} \text{ Հց}$  է: Պլանկի հաստատունը  $6,6 \cdot 10^{-34} \text{ ՋՎ}$  է, էլեկտրոնի լիցքի մոդուլը՝  
 $1,6 \cdot 10^{-19} \text{ Կլ}$ :

49

Որքա՞ն է մետաղի ելքի աշխատանքը: Պատասխանը բազմապատկել  $10^{20}$ - ով:

50

Ի՞նչ առավելագույն հաճախության դեպքում մետաղից պոկված էլեկտրոնները լրիվ  
կարգելակվեն  $3,3 \text{ Վ}$  կասեցնող լարման դեպքում: Պատասխանը բազմապատկել  
 $10^{-14}$ - ով:

(51-52) 15 կգ զանգվածով շաղախով լի դույլը պարանով բարձրացնում են 4 մ բարձրությամբ առաջին հարկի կտորը: Սի դեպքում այն բարձրացնում են հավասարաչափ, մյուս դեպքում՝  $1 \text{ m}/\text{v}^2$  արագացումով: Օդի դիմադրությունն ու պարանի զանգվածն անտեսել: Ազատ անկման արագացումը  $10 \text{ m}/\text{v}^2$  է:

51 Որքա՞ն է դույլը հավասարաչափ բարձրացնելու համար կատարված մեխանիկական աշխատանքը:

52 Երկրորդ դեպքում կատարված մեխանիկական աշխատանքը որքանո՞վ է մեծ առաջին դեպքում կատարված աշխատանքից:

(53-54) 2 կգ զանգվածով պղնձի կտորը տաքացնելու և կիսով չափ հալելու համար պահանջվում է  $9,4 \cdot 10^5 \Omega$  ջերմաքանակ: Պղնձի տեսակարար ջերմունակությունը  $380 \text{ } \mathcal{Q}/\text{կգ}\cdot\text{Կ}$ , հալման ջերմաստիճանը՝  $1083 {}^\circ\text{C}$ , իսկ հալման տեսակարար ջերմությունը՝  $180 \text{ } \mathcal{Q}/\text{կգ}$ :

53 Ի՞նչ ջերմաքանակ է ծախսվում հալման ջերմաստիճանում պղնձի կտորի կեսի հալման համար: Պատասխանը բազմապատկեր  $10^{-4}$ -ով:

54 Որքա՞ն է պղնձի կտորի սկզբնական ջերմաստիճանը Յելսիուսի սանդղակով:

- (55-57) 0,1 մ երկարությամբ հավասարակողմ եռանկյան գագաթներում գտնվում են  $6 \cdot 10^{-7}$  Կլ կետային լիցքեր:Կուլոնի օրենքում համեմատականության գործակիցն ընդունել՝  $k=9 \cdot 10^9$  Ն·մ<sup>2</sup>/Կլ<sup>2</sup>, իսկ  $\sqrt{3} = 1,7$ :

55

Որքա՞ն է երկու լիցքերի փոխազդեցության ուժը: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:

56

Որքա՞ն է երկու լիցքերի կողմից երրորդ լիցքի վրա ազդող ուժը: Պատասխանը բազմապատկել  $10^4$ -ով:

57

Որքա՞ն պետք է լինի եռանկյան կենտրոնում տեղավորված լիցքի մեծությունը (մոդուլ), որպեսզի համակարգը գտնվի հավասարակշռության վիճակում: Պատասխանը բազմապատկել  $10^8$ -ով:

(58-60) Երկու միատեսակ բալոններ իրար միացված են փականով, որը բացվում է, եթե ճնշումների տարրերություն  $1,25 \cdot 10^5$  Պա է: Սկզբում առաջին բալոնում վակուում է, իսկ երկրորդում՝ իդեալական գազ, որի ջերմաստիճանը  $27^\circ\text{C}$  է, ճնշումը՝  $10^5$  Պա: Երկու բալոններն էլ տաքացնում են մինչև  $117^\circ\text{C}$  ջերմաստիճանը:

58

Ի՞նչ ճնշում է հաստատվում առաջին բալոնում:

59

Ի՞նչ ճնշում է հաստատվում երկրորդ բալոնում: Պատասխանը բազմապատկեք  $10^{-2}$ -ով:

60

Քանի՞ անգամ է երկրորդ բալոնում մնացած գազի զանգվածը մեծ առաջին բալոն տեղափոխված գազի զանգվածից:

(61-64) Հավաքող բարակ ոսպնյակից 10 սմ հեռավորությամբ գտնվող առարկայի իրական պատկերը ստացվում է 4 սմ բարձրությամբ: Եթե այդ առարկան գտնվում է ոսպնյակից 15 սմ հեռավորությամբ, նրա պատկերն ստացվում է 2 սմ բարձրությամբ:

61

Որքա՞ն է առարկայի բարձրությունը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:

62

Որքա՞ն է պատկերի հեռավորությունը ոսպնյակից՝ առաջին դեպքում: Պատասխանը բազմապատկել  $10$ -ով:

63


Որքա՞ն է պատկերի հեռավորությունը ոսպնյակից՝ երկրորդ դեպքում: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:

64

Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:

- (65-68) Նկ. 1-ում պատկերված համակարգում  $m_1=12$  կգ, իսկ  $m_2=2$  կգ: ճախարակների և թելերի զանգվածները, շփումը ճախարակի առանցքում անտեսել: Ազատ անկման արագացումը  $10 \text{ մ/վ}^2$  է:

- 65 Որքա՞ն է  $m_1$  զանգվածով բեռի արագացումը: Պատասխանը բազմապատկել 10-ով:



Նկ. 1

- 66 Որքա՞ն է  $m_2$  զանգվածով բեռի արագացումը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

- 67 Որքա՞ն է  $m_2$  զանգվածով բեռը շարժական ճախարակին միացնող թելի լարման ուժը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

- 68 Որքա՞ն է անշարժ ճախարակն առաստաղին միացնող թելի լարման ուժը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

69

Սի ծայրը փակ բարոմետրական խողովակը բաց ծայրով, ուղղաձիգ դիրքով դանդաղորեն ընկղութ են ջրով լցված բաժակի մեջ: Այդ ընթացքում խողովակում օդի ջերմաստիճանը չի փոխվում: Հաստատեք կամ ԺԽՄ հետևյալ պնդումները:

- 1) Խողովակում օդի մոլեկուլների միջին կիմետրիկ էներգիան մեծանում է:
- 2) Խողովակում օդի մոլեկուլների միջին քառակուսային արագությունը մնում է հաստատուն:
- 3) Խողովակում օդի ներքին էներգիան մնում է հաստատուն:
- 4) Խողովակում օդի սյան բարձրությունը նվազում է:
- 5) Խողովակում օդի խտությունն աճում է:
- 6) Խողովակում օդի ճնշումը փոքրանում է:

70

զօ լիցքով մասնիկը և արագությամբ մտնում է Բ ինդուկցիայով համասեռ մազմիսական դաշտ: Հաստատեք կամ ԺԽՄ հետևյալ պնդումները:

- 1) Ինդուկցիայի գծերի երկայնքով շարժվելիս,  $\vec{S}$  տեղափոխության վրա Լորենցի ուժի կատարած աշխատանքը հավասար է  $q_0vBS$ :
- 2) Ինդուկցիայի գծերին ուղղահայաց շարժվելիս Լորենցի ուժն աշխատանք չի կատարում:
- 3) Ինդուկցիայի գծերի նկատմամբ  $\alpha$  անկյան տակ շարժվելիս, Լորենցի ուժի աշխատանքը հավասար է  $q_0vBScos\alpha$ :
- 4) Ինդուկցիայի գծերի երկայնքով շարժվելիս, նաև կկատարի հավասարաչափ փոփոխական շարժում:
- 5) Ինդուկցիայի գծերին ուղղահայաց մտնելիս, կկատարի հավասարաչափ շրջանագծային շարժում:
- 6) Ինդուկցիայի գծերի նկատմամբ անկյան տակ մտնելիս, կշարժվի պարույրագծով: